ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՆԵՐԴՐՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

08.04.2016 15:55

ՀՀ փաստաբանների պալատում ապրիլի 8-ին Եվրոպայի խորհրդի «Աջակցություն Հայաստանում պրոբացիայի ծառայության ներդրմանը» ծրագրի շրջանակներում կազմակերպվել էր վերապատրաստման դասընթաց-քննարկում պրոբացիայի ծառայության վերաբերյալ:
Դասընթացը վարել է «Սոցիալական արդարություն» ՀԿ նախագահ Արշակ Գասպարյանը: Քննարկմանը ներկայացվել է ՊՐՈԲԱՑԻԱ պետական ծառայության առանձնահատկությունները, կառուցվածքը: Մասնակիցները ինտերակտիվ եղանակով ծանոթացել են պրոբացիայի հասկացությանը, միջազգային իրավական կարգավորումներին: Փաստաբաններին հետաքրքրել է պրոբացիայի դրական ազդեցության ուսումնասիրությունների միջազգային վիճակագրությունը և ՀՀ-ում ներդրվելու դեպքում հնարավոր ռիսկերն ու առանձնահատկությունները:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })